ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-1>>

«05» մայիսի 2018 թ.

ք.Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման ու ճաքալցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի **տեխ.բնութագրին**, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2018թ հոկտեմբերի 1-ը ներառյալ:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում **տեխ. բնութագրին և** նախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ տեխ. **բնութագրին և ծավալաթերթին** համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4):

Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այնակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից **հաշված 30 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **797 508 000 (յոթ հարյուր իննսունյոթ միլիոն հինգ հարյուր ութ հազար)** << դրամ, որից **132 918 000.0 (հարյուր երեսուներկու միլիոն ինն հարյուր տասնութ հազար)** << դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 159 501 600 (մեկ հարյուր հիսունինը միլիոն հինգ հարյուր մեկ հազար վեց հարյուր) << դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում

նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[1]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ **գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը**, Կապալառուն ներկայացրել է **կեղծ փաստաթղթեր** (տեղեկություններ և տվյալներ), **կամ վերջինիս ընտրված** մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

---

[1] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման **հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ** սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կապալառու
Երևանի քաղաքապետարան	«ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	ք.Երևան , Հովսեփյան 95 ա
Կենտրոնական գանձապետարան	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Արմենիա մ/Ա
Հ/Հ 900012410099	Հ/Հ 220410124014000
ՀԿՀՀ 02593108	ՀԿՀՀ 00018682
Գ. Չթրյան---------- (ստորագրություն)	Ա. Ավագյան---------- (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 05 » մայիսի 2018թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-1 *ծածկագրով պայմանագրի*

ԾԱԿԱԼԱԹԵՐԹ

Երևան քաղաքի փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ (1-ին չափաբաժին)

հազ. դրամ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Քանակ	Միավորի գինը	Ընդամենը
1	**Փողոցների ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգում**				
	Ասֆալտբետոնյա ծածկի տաշում ֆրեզով, բարձում, տեղափոխում թափոնատեղ, ճաքալցում, անհրաժեշտության դեպքում մինչև 10 % հարթեցնող շերտի և խճե հիմքի իրականացում, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտբետոնյա ծածկի տեղադրում 4-5 սմ հաստությամբ ասֆալտատեղադրիչով	քմ	58710	3.692	216757.3200
2	**Դիտահորերի ծածկի սալի նիշերի ուղղում**				
	Ասֆալտբետոնյա ծածկի և հիմքի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղ, հիմքերի և կողային տարածքի բետոնապատում մինչև h=30սմ, ծածկի սալի վերատեղադրում, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի իրականացում $h_{միջ}$ = 5սմ հաստությամբ	հատ	26	81.923	2129.9980
3	**Անձրևորսիչների նիշերի ուղղում**				
	Ասֆալտբետոնյա ծածկի և հիմքի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղ, հիմքերի և կողային տարածքի բետոնապատում մինչև h=15սմ, անձրևորսիչի վերատեղադրում, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի իրականացում $h_{միջ}$ =5սմ հաստությամբ	հատ	13	32.745	425.6850
4	**Մայթերի և բակային ճանապարհների վերանորոգում**				
	Մայթերի և բակային ճանապարհների ասֆալտբետոնյա ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղ, անհրաժեշտության դեպքում խճի հիմքի իրականացում մինչև 10%, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտբետոնյա ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ	քմ	65000	3.281	213265.0000

5	Փոսային նորոգում մինչև 25քմ				
	Ասֆալտբետոնյա ծածկի քանդում ֆրեզով, եզրերի մշակում սղոցով և կոմպրեսորով, բարձում, տեղափոխում թափոնատեղ, անհրաժեշտության դեպքում խճե հիմքի իրականացում, մակերեսի մշակում բիտումով, ասֆալտբետոնյա խառնուրդի տեղադրում h=4-5սմ հաստությամբ	քմ	20200	4.060	82012.0000
	ԸՆԴԱՄԵՆԸ				514590.00
	ԱԱՀ 20%				102918.00
	ԸՆԴԱՄԵՆԸ				617508.00

ԾԱԿԱԼԱԹԵՐԹ–ՆԱԽԱՀԱՇԻՎ					
Երևան քաղաքի փողոցների ասֆալտբետոնյա ծածկի ճաքալցման աշխատանքներ					
					հազ. դրամ
Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Քանակ	Միավորի գինը	Ընդամենը
1	Ճաքերի մշակում,մաքրում կեղտից, փոշուց և ա/բ կտորներից խտացված օդի շիթով և մեխանիկական եղանակով, ճաքերի լցափակում բիտումապոլիմերային մածիկով	գծմ	402187	0.37296	150000
	ԸՆԴԱՄԵՆԸ				150000
	ԱԱՀ 20%				30000
	ԸՆԴԱՄԵՆԸ				180000

Տեխնիկական բնութագիր

1.Նախապատրաստական աշխատանքներ ֆրեզով և կոմպրեսորով,
2.Դիտահորերի և անձրևաորսիչների նիշերի ուղղում՝վերատեղադրմամբ,անհրաժեշտության դեպքում նորի տեղադրումով,
3.Ասֆալտապատման ենթակա մակերեսի մաքրում կեղտից, փոշուց և առաջացած ասֆալտբետոնյա կտորներից, մակերևութի մշակում բիտումային էմուլսիայով, անհրաժեշտության դեպքում խճե հիմքի ուղղում խճով կամ ֆրեզավորված ասֆալտբետոնով, ֆրեզավորված մակերեսում առկա ճաքերի ճաքալցում,
4.Վերոգրյալ աշխատանքների թաքնված աշխատանքների ակտը տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպության և պատվիրատուի կողմից հաստատելուց հետո իրականացնել ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի տեղադրում,
5.Շին աղբի բարձում և տեղափոխում,
6.Շին.աշխատանքների ժամանակ ճանապարհների վերանորոգվող հատվածների փակում և առանձնացում, ինչպես նաև տրանսպորտային հոսքի կարգավորման իրականացում ճանապարհային նշանների տեղադրմամբ կամ վերատեղադրմամբ,
7.Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Երևանի քաղաքապետարանի կողմից տրվող պատվեր–առաջադրանքների հիման վրա:

Տեխնիկական առաջադրանք

1.Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին և կանոններին համապատասխան,
2.Կապալառուն, պատվեր-առաջադրանքը ստանալուց հետո, պատվիրատուին է ներկայացնում նախատեսված ա/բ խառնուրդի բաղադրության ընտրության արդյունքները:

3.Կապալառուն աշխատանքները սկսելուց առաջ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության և Պատվիրատուի ներկայացուցչի հետ միասին, տեղում ուսումնասիրում է և սխեմատիկ հատակագծի վրա նշում է կատարվելիք աշխատանքների տեղը և ծավալները:
4.Կատարված աշխատանքները ընդունելու համար Կապալառուն ներկայացնում է կատարողական գծագրերը, գործընթացի լուսանկարները, թաքնված աշխատանքների ակտերը, օգտագործված շինարարական նյութերի (ասֆալտբետոնե խառնուրդ,բիտում, բազալտե խիճ, կվարցային ավազ) որակը հավաստող փաստաթղթերը (երկու օրինակից):
5.Ֆրեզով նախապատրաստական աշխատանքների ավարտից հետո ա/բ տաշվածքը տեղափոխել պատվիրատուի կողմից առաջադրված վայրը:

Տեխնիկական բնութագիր
(ճաքալցման աշխատանքներ)

1.Ճանապարհային նշանների տեղադրում և վերատեղադրում
2.Ճաքերի մշակում, մաքրում կեղտից, փոշուց և ա/բ կտորներից
3.Ճաքերի լցափակում բիտումապոլիմերային մածիկով
4.Շինաղբի բարձում և տեղափոխում
5.Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Երևանի քաղաքապետարանի կողմից տրվող պատվեր-առաջադրանքի հիման վրա:

Տեխնիկական առաջադրանք

1.Աշխատանքներն իրականացնել գործող շինարարական նորմերին, կանոններին և տեխնիկական պայմաններին համապատասխան:

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410099
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ
ք.Երևան , Հովսեփյան 95 ա
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Արմենիա մ/ճ
Հ/Հ 220410124014000
ՀՎՀՀ 00018682

Ա. Ավագյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 05 » մայիսի 2018թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման ու ճաքալցման » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	*Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ*	Պայմանագիրը ուժի մտնելու օրը:	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 01.10.2018թ
2	*Երևան քաղաքի փողոցների, ասֆալտ-բետոնյա ծածկի ճաքալցման աշխատանքներ*	Պայմանագիրը ուժի մտնելու օրը:	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 01.10.2018թ
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրը ուժի մտնելու օրը:	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 01.10.2018թ

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410099
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ
ք.Երևան , Հովսեփյան 95 ա
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Արմենիա մ/ճ
Հ/Հ 220410124014000
ՀՎՀՀ 00018682

Ա. Ավագյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«05» մայիսի 2018թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-1 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231187	*Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ*	358 935 148	358 935 148	358 935 148	579 818 316	579 818 316	579 818 316	617 508 000	617 508 000	617 508 000	617 508 000
2	45231187	*Երևան քաղաքի փողոցների, ասֆալտ-բետոնյա ծածկի ճաքալցման աշխատանքներ*	102 960 000	102 960 000	102 960 000	166 320 000	166 320 000	166 320 000	180 000 000	180 000 000	180 000 000	180 000 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410099
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ
ք.Երևան , Հովսեփյան 95 ա
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Արմենիա մ/ճ
Հ/Հ 220410124014000
ՀՎՀՀ 00018682

Ա. Ավագյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
« 05 » մայիսի 2018թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____ և
_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«05» մայիսի 2018թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ACBA-CREDIT AGRICOLE BANK

05 մայիսի 2018թ. Թիվ 01-605

ք. Երևան

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 1741 40 04524/4

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 00018682) (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման և ճաքալցման աշխատանքների 1-ին և 9-րդ չափաբաժին-ներով թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-1» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 79 750 800.00 (յոթանասունինը միլիոն յոթ հարյուր հիսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի՝ Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Սույն Երաշխիքը գործում է տրման պահից և գործում է մինչև 20/12/2019թ-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ Պահանջին կից ներկայացնելով խախտման հիմնավորումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատաս-խանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատաս-խանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Բենեֆիցիարն իրավունք ունի Երաշխիք տվող անձի բանկից պահանջելու Երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներ-կայացնելով Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճա-րում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա հա-մար 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, Երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահ-մանափակվում Երաշխիքի գումարով:

Կենտրոնական գրասենյակ
ՀՀ, Երևան, 0002, Արամի 82-84
82-84 Aram st., Yerevan, 0002, RA
acba@acba.am / (+374 10) 31 88 88 / www.acba.am

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե
ա) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում Երաշխիքի պայմաններին,
բ) պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Բենեֆիցիարն իրավունք ունի հրաժարվել սույն Երաշխիքից բխող իր իրավունքներից ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասամբ: Մասամբ հրաժարվելու դեպքում սույն Երաշխիքի գումարը նվազում է Բենեֆիցիարի կողմից հրաժարված գումարի չափով:

13. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

14. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վաճառքի խթանման և ռեգիոնալ կառավարման գծով
գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Նազարյան

Կենտրոնական գրասենյակ
ՀՀ, Երևան, 0002, Արամի 82-84
82-84 Aram st., Yerevan, 0002, RA
acba@acba.am / (+374 10) 31 88 88 / www.acba.am

ACBA-CREDIT AGRICOLE BANK

05 մայիսի 2018թ.

Թիվ 01-606

ք. Երևան

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
թիվ 1741 40 04524/5

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00018682) (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման և ճաքալցման աշխատանքների 1-ին և 9-րդ չափաբաժիններով թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-1» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների պատշաճ կատարման և կանխավճարի վերադարձման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 159 501 600,00 (մեկ հարյուր հիսունինը միլիոն հինգ հարյուր մեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Սույն Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրման պահից և գործում է մինչև 20/12/2018թ.-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ կից ներկայացնելով Պրինցիպալի կողմից սույն Երաշխիքով Երաշխավորված պարտավորությունների խախտման հիմնավորումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու Երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, Երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, Երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում Երաշխիքի գումարով:

Կենտրոնական գրասենյակ
ՀՀ, Երևան, 0002, Արամի 82-84
82-84 Aram st., Yerevan, 0002, RA
acba@acba.am / (+374 10) 31 88 88 / www.acba.am

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե

ա) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում Երաշխիքի պայմաններին,

բ) պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Բենեֆիցիարն իրավունք ունի հրաժարվել սույն Երաշխիքից բխող իր իրավունքներից ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասամբ: Մասամբ հրաժարվելու դեպքում սույն Երաշխիքի գումարը նվազում է Բենեֆիցիարի կողմից հրաժարված գումարի չափով:

13. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

14. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վաճառքի խթանման և ռեգիոնալ կառավարման գծով
գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Նազարյան